

Վարչապետ Ռաֆիբ Հարիրի երկ երկդեղան մեկնեցաւ Սէնտա-կան Արարիա, ուր հանդիպումներ պիտի ունենայ պետական և բարձրաստիճանի պաշտօնատարներու հետ և պիտի քննարկէ լիբանանե-սէնտալական երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջա-նային հարցեր:

Վարչապետը նաեւ սէնտալի դեկլարանքներու հետ պիտի արձարծէ «Փարիզ-2» վեհաժողովին կապուած հարցեր, անոնցմէ խնդրելով Լի-բանանի համար լատով նշանակութիւն ունեցող այս վեհաժողովին նեցուկ կանգնել և օժանդակել լայն մասնակցութեամբ:

Վարչապետը այսօր կը վերադառնայ Պէյրութ:

### ԱՊՏՕ ՏԻՈՒՑ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՓՈԽԱՐԻՆԵԼՈՎ ՊՈՒԹՐՈՍ ՂԱԼԻՆ

## ՖՐԱՆՍԱԽՕՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՐԴ ՎԵՐԱԺՈՂՈՎ ԲԱԿՈՒԵՑԱՒ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ, ՅԱՏԿԱՆՇՈՒԵԼՈՎ ԱՆՆԱԽԸՆԹԱՅՕՐԵՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

Ֆրանսախօս Երկիրնե-րու կազմակերպութեան Գրդ Վեհաժողովը, որ «Մշակոյթնեցու երկխոս-տութիւն» գլխաւոր թե-մայով եւ Երկիրնեցու գումարեց Պէյրութի մէջ, եզրափակուեցաւ երէկ, հրատարակելով «Պէյրու-թի յայտարարութիւն»ը, ինչպէս նաեւ ժողովը հիւ-րընկալած Լիբանանի եւ Ֆրանսայի նախագահնե-րու, կազմակերպութեան նորընտիր ու նախկին ընդհանուր քարտուղար-ներու միացեալ մամուլայ ստույխով:

«Պէյրութի յայտարար-ութեան» պարագային յատկանշական էր անոր մէջ յաւելումը Լիբանան-ի, Միջին Արեւելքի եւ իրաքի վերաբերեալ յօդ-ւածներու:

Կազմակերպութեան Գրդ Վեհաժողովի եզրա-փակիչ նիստին ետք հրա-պարակուեցաւ «Պէյրու-թի յայտարարութիւն»ը:

#### ԵԶՐԱՓՈՒԿ ՆԻՍՏԸ

Եզրափակիչ նիստին, նախագահ գործիչ Լա-հուտ ժողովի փակման խօսքին մէջ նկատել տուաւ, որ այս կազմա-կերպութեան գործնական-ին մէջ հիմնական նշա-նակութիւն ունի «Պէյ-րութի յայտարարու-թեան» որդեգրումը եւ յայտնեց, որ այս յայտարարութիւնը ունի երեք առանցք. առաջին՝ հեր-թին, անիկա կ'ըսէ, թէ անհրաժեշտ է մշակոյթ-ներու երկխոսութիւնը արդիւնաւորել, ծառայե-լով խաղաղութեան, ժո-ղովրդավարութեան եւ մարդկային իրաւունքնե-րուն. այս ծիրէն ներս միա-համուռ դատապար-տուեցան ահաբեկչութեան բոլոր երեսները եւ յանձն առինք անոնց դէմ պայ-քարել ՄԱԿի որոշումնե-րուն հիմամբ, միաժամա-նակ յարգելով բոլոր պե-տութեանց զերիշխանու-թիւնն ու հողային ամ-բողջականութիւնը:

«Ֆրանսախօսութիւնն ու անոր անդամներուն միջեւ համերաշխութիւնը անբաժանելի են եւ անհրա-ժեշտ է գործել բոլոր անդամներուն, մասնա-ւանդ ավերիկեան երկիր-ներու բարգաւաճումին համար», ըսաւ ան եւ աւելցուց, որ կարեւորա-գոյն որոշումը նոր ընդ-հանուր քարտուղարի մը ընտրութիւնն էր: Ապա ան դրուատիքով խօսե-ցաւ նախկին ընդհանուր քարտուղարի ճիգերուն մասին:

Կազմակերպութեան նորընտիր ընդհանուր քարտուղար Սենեկալի նախկին նախագահ Ապ-տո Տիւրֆ, որ փոխարի-նեց երկարամիջամտութեան ղախին, իր խօսքին մէջ ըսաւ, որ քննարկուած է աշխատանքի ծրագիր մը, որուն շնորհ համախոհու-թիւն գոյացաւ, որուն իր-րեւ արդիւնք որդեգրուե-ցաւ «Պէյրութի յայտարար-



Իշխանութեան երեք պետերը կը ճամբեն Գախազահ Ժաք Ծիրաքը



Ֆրանսախօս Երկիրներու կազմակերպութեան Գրդ Վեհաժողովի ընդհանուր քարտուղար Սենեկալի Գախազահ Ապտո Տիւրֆ

րարութիւն»ը:

#### «ՊԵՅՐՈՒԹԻ ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ»Ը

«Պէյրութի յայտարար-ութեան» ընդգծեց, որ կազմակերպութեան Գրդ Վեհաժողովի թեման հան-դիսացած է մշակոյթնե-րու երկխոսութիւնը եւ ժողովականները յանձն-նառուութիւն յայտնած են ամբապնդելու Ֆրանսա-խօսութեան դերակատար-ութիւնը, ի խնդիր խա-ղաղութեան, ժողովրդա-վարութեան եւ մարդկա-յին իրաւունքներուն:

«Պէյրութի յայտարար-ութեան» ընդգծեց, որ յայտ-նեց, որ ժողովականները մտահոգութիւն յայտնած են, որովհետեւ աշխարհի տարբեր շրջաններու մէջ վայրագութիւնները կը շարունակուին, ահաբեկ-չութիւնը կը տարածուի, ինչպէս նաեւ կը սաստ-կանայ ամէն տեսակի տագնապներու եւ հակա-մարտութիւններու արդէն-իսկ սուր ընդթել: Այս գծով անոնք հաւաստե-ցին, որ մշակոյթնեցու միջեւ երկխոսութիւնը հիմնական նախապայման է խաղաղ լուծումներու որոնման ճիգերու ար-դիւնաւորութիւն, եւ հնա-

րաւորութիւն կ'ընձեռէ պայքարելու մոլեռան-դութեան եւ ծայրայեղա-կանութեան դէմ:

Ժողովականները «Պէյրութի յայտարարու-թեան» մէջ ՄԱԿի որո-շումներուն հիմամբ խստիւ դատապարտեցին ամէն տեսակի ահաբեկ-չութիւն, ընդգծելով անհրա-ժեշտութիւնը բոլոր պետութիւններուն եւ կառավարութիւններուն միջեւ գործակցութեան, պայքարելու եւ վերջ դնե-լու այս փոստին. անոնք նաեւ յանձնառուութիւն յայտնեցին կարելի չափով արագ միասնալու ահա-բեկչութեան դէմ պայքա-րի բոլոր համաձայնու-թիւններուն եւ ուխտե-րուն:

Անոնք նաեւ կոչ ուղ-ղեցին մշակուելու ստո-րագրելու ահաբեկչու-թեան մասին ընդհանուր համաձայնագիր մը:

Յայտարարութիւնը նաեւ դատապարտեց պե-տութիւններու զերիշխա-նութեանց բռնաբարում-ները, ինչպէս նաեւ գաղ-թեկութեան հիւրանկալի երկիրներու հողատար-ածքներէն մեկնող այդ գաղթականներու հայրե-նիքները սպառնալու փե-զով յայտարարեց իր գո-

գրաւորումները, զինեալ արարքները, թալանը, վայրագութիւնները, բնական հարստութեանց ապօրինի շահագործումը եւ մարդկային իրաւանց խախտումները:

Ժողովականները նաեւ գորակցութիւն յայտ-նեցին ՄԱԿի, որ կաշխա-տի խաղաղ լուծումներ տալու այս հարցերուն:

«Պէյրութի յայտարար-ութեան» մէջ ժողովա-կանները վերահաստա-տեցին իրենց անվերա-պահ գորակցութիւնը Լի-բանանի եւ իր ժողովուր-դի ճիգերուն, յարողու-թեամբ դիմագրաւելու համար քաղաքական, տնտեսական եւ ընկերա-յին մարտահրաւերները:

Միջին Արեւելքի խա-ղաղութեան գործընթա-ցը անմիջապէս շարունա-կելու կոչ ուղղելով, ժո-ղովականները շեշտեցին, որ անոր մեկնակէտերը կը մնան Մատրիտի ժո-ղովին որդեգրած սկզբունքներն ու ՄԱԿի առնչութիւն ունեցող որոշումները, ի մասնա-ւոր թիւ 242 եւ 338 որո-շումները:

Այս ծիրէն ներս Ֆրան-սախօսներու վեհաժող-ովը յայտարարեց իր գո-

րակցութիւնը խաղաղու-թեան արարական նախա-ձեռնութեան, որ միա-ձայնութեամբ որդեգրու-ած է Պէյրութի մէջ 27-28 Մարտ 2002ին գու-մարուած Արաբական Լի-կայի վեհաժողովին, շեշ-տը դնելով անոր մէջ «խա-ղաղութեան փոխարէն հող» սկզբունքին եւ պա-ղեստինցի գաղթականնե-րու հարցին վերաբերեալ տրամադրութիւններուն վրայ:

«Պէյրութի յայտարար-ութեան» ընդգծեց, որ այս նախաձեռնու-թիւնը ցարդ ներկայաց-ւած լաւագոյն շրջա-գիծն է հասնելու համար շրջանէն ներս արդար եւ ամբողջական լուծումի:

«Պէյրութի յայտարար-ութեան» ընդգծեց, որ այս նախաձեռնու-թիւնը ցարդ ներկայաց-ւած լաւագոյն շրջա-գիծն է հասնելու համար շրջանէն ներս արդար եւ ամբողջական լուծումի:

Փոքուկրեայ Ափունքի մէջ տիրող կացութեան գծով Պէյրութի վեհաժո-ղովը դատապարտեց իշ-խանութեան բռնի ուժով տիրանալու փորձն ու սահմանադրական կար-գերու խախտումը, կոչ ուղղելով երկրի բոլոր քաղաքական հատուած-ներուն ու ժողովուրդին՝ ոչ միայն վերապահու-թիւն յայտնելու, այլ նաեւ հրատարակել վարա-գութեան եւ պաշտպանե-լու անհատներու կեան-քերն ու ունեցուածքը:

Ժողովականները գո-րակցութիւն յայտնեցին երկխոսութեան ոճը ամ-բապնդելու ճիգերուն, հաստատելով, որ ան է վերջնական հաշտութեան միակ ուղին:

Յայտարարութիւնը ընդգծեց, որ Ֆրանսախօս Երկիրներու կազմակեր-պութիւնը հիմ մըն է եւ շրջագիծ՝ մշակոյթնեցու երկխոսութեան, ապա անկախութեամբ լեզուա-կան եւ մշակութային քա-ղաքականութիւններու, ընդգծեց, որ Ֆրանսախօ-սութիւնը աւելի մեծ դե-րակատարութիւն պէտք է ունենայ տնտեսական եւ ընկերային բարգաւա-ճումին մէջ:

Մշակոյթնեցու եւ քա-ղաքակրթութիւններու միջեւ երկխոսութեան ընտանքի ամբապնդու-մը անհրաժեշտութիւն մըն է, որպէսզի անոնք գործակցին՝ գտնելու հա-մար միջազգային մեծ հարցերու լուծումները:

Յայտարարութիւնը կոչ ուղղեց յարգելու մարդկային իրաւունքնե-րը:

#### «ԱՉՂԱՎ» ՀԵՌԱՉՍՅՆԱՅԻՆ ՀՆՂՈՂՎԱԿՑՈՒԹԵՄՔ

#### ԵՐԵՎԱՆԻ ԿԸՏԵՂ ԵԿԱՆԱՅ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՇԽՈՒԺ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ



Նախագահ Զոչարեան կը մեկնի քուէարկութեան կեդրոնէն՝ կատարելով քաղաքացիական իր պարտաւորութիւնը

Երկ Հայաստանի մէջ տեղի ունեցան տե-ղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններ:

«Ազդակ» հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ Հայաստանի Հ. Յ. Գ. Գեղարդյան Մար-մինի անդամ և լրատուական բաժնի պատա-խանատու ընկ. Գեղամ Մանուկեանի հետ, որ փոխանցեց տեղեկութիւններ. լայնելով սա-կայն, թէ պաշտօնական արդիւնքներ պիտի հրապարակուին քանի մը օրէն և նախնական արդիւնքներ են, որ կը փոխանցուին: Ընկ. Գե-ղամ Մանուկեանի համաձայն՝ ոչ մէկ միջադէպ պատահած է և ընտրութիւնները ընթացած են հեշտապէս և եղած է ժողովրդային աշխուժ մաս-նակցութիւն:

Սուտեան ժամը 8:00էն սկսեալ քուէար-կողներ մեկնեցան քուէարկութեան կեդրոններ, Ծարը՝ էջ 2

#### ԺԱԲ ԾԻՐԱԸ ՊԵՅՐՈՒԹԵՆ ՄԵԿՆԵՑԱՒ ԴԱՄԱՍԿՈՍ



Ասատ կ'ընդունի Ծիրաքը

Ֆրանսայի նախագահ Ժաք Ծիրաք երէկ յետմիջօ-րէին Ֆրանսական պատուիրակութեան ընկերակցու-թեամբ Պէյրութէն մեկնեցաւ Դամասկոս եւ տեսակ-ցեցաւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հետ: Ծի-րաք պալ մեկնեցաւ Յորդանան եւ Ամմանի մէջ տե-սակցեցաւ Ապտալա թագաւորին հետ:

Նախագահ Ծիրաքի ի պատիւ Պէյրութի օդակայ-նին մէջ նախագահ գործիչ Լահուտ ընդունելու-թիւն մը կատարեց: Ներկայ էին նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի, վարչապետ Ռաֆիբ Հարիրի եւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը-Քուրթիէ:

Տեսակցութեան ընթացքին նախագահ Ծիրաք շնոր-հակցութիւն յայտնեց իշխանութեան երեք պետե-րուն՝ իրեն հանգէպ ցուցաբերած սիրալիք ու խոր յարգանքին համար:

Նախագահ Ծիրաք նաեւ ուրախութիւն յայտնեց Ֆրանսախօս Երկիրներու վեհաժողովի յարողու-թեան, կազմակերպական փայլուն աշխատանքին եւ մասնակցողներու հսկայական թիւին համար, ինչ-պէս նաեւ քննարկուած գանձազան հարցերուն, տրուած որոշումներուն եւ յառաջիկայ շրջանին հա-մար դժուած նոր ուղղութիւններուն մասին:

Նախագահ Ծիրաք խօսքը ուղղելով իշխանութեան երեք պետերուն՝ դրուատեց Պէյրութը եւ Լիբանանը ընդհանուր առմամբ վերակառուցելու եւ բարգաւա-ճեցնելու աշխատանքը, նկատեալ տալով, որ քաղա-քացիական պատերազմէն ետք արդէն իսկ կատար-ւած են շինարարական մեծ նուաճումներ:

# ՖՐԱՆՍԱԽՕՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ...

Շարունակում Ա. Էջէն

## ԺՐՆԵՒԻ ՄԵԶ

### ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՋԿՐՕՆԱԿԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԼԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱՒ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՏ

Ուրբաթ, 18 Հոկտեմբեր 2002ին, ժրնեւի մէջ, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսին հետ հանդիպում մը ունեցաւ Վատիկանի միջկրօնական երկխօսութեան ու յարաբերութեան բաժանմունքի նախագահ Ֆիցքըրըլտ արքեպիսկոպոսը: Հանդիպման ընթացքին շեշտուեցաւ միջկրօնական յարաբերութեան կարեւորութիւնը ներկայ աշխարհին մէջ եւ ոչ քրիստոնէայ կրօններու հետ գործակցութեան կարելիութիւններ ստեղծելու անհրաժեշտութիւնը, մասնաւորաբար մարդկութիւնը յուսով ընդհանուր հարցերու շուրջ:

Այս շրջագիծին ներս յատուկ կարեւորութեամբ շեշտուեցաւ քրիստոնէա-իսլամ գործակցութիւնը եւ այս գծով վեհափառ հայրապետը արքեպիսկոպոսին ուշադրութեան յանձնեց շարք մը ծրագիրներ եւ մտահոգութիւններ:

Ֆիցքըրըլտ արքեպիսկոպոս երկու տարիներէ ի վեր Վատիկանի միջկրօնական յարաբերութեան եւ երկխօսութեան ընդհանուր քարտուղարն էր եւ անցնող ամիս պապին կողմէ նշանակուեցաւ նոյն բաժանմունքի նախագահ: Վեհափառ հայրապետը մտնելու կը ճանչնայ արքեպիսկոպոսը, որ քաջամասօթ է յատկապէս իսլամական կրօնին: Ան այս օրերուն ժրնեւի մէջ կը մասնակցի իսլամ-քրիստոնէայ համագործակցութեան, Վատիկանի որպէս ներկայացուցիչ:

## ՄԻԱՅԵԱԼ ՍԱՍՆՈՅ ԱՍՈՒԼԻՍ

Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան 9րդ Վեհաժողովի եզրափակիչ նիստին ետք, ժողովը գլխաւորաբար Լիբանանի նախագահ Ժաֆ Ծիրաք, Քանաթաքի վարչապետ Ժան Քրէթիէն, կազմակերպութեան նորընտիր ընդհանուր քարտուղար Պուլթրոս Լալի եւ Պուլթրոս Գրիսի նախագահ Ժան Քրէթիէն, կազմակերպութեան նորընտիր ընդհանուր քարտուղար Պուլթրոս Լալի եւ Պուլթրոս Գրիսի մասին «Պիէրի» մէջ: Նախագահ զօր: Էմիլ Լահուտ իր խօսքին մէջ հաւաստեց, որ այս ժողովը պատմական է եւ Լիբանանի մէջ զգալի է քաղաքականութիւններու եւ մշակութիւններու երկխօսութիւնը, մինչ Սեպտեմբեր 11ի դէպքերէն ետք կը խօսուէր անոնց բախումին եւ պատերազմներու մասին, իսկ Լիբանանցի ժողովուրդի տարբեր համայնքներու եւ արեւելումներու խաղաղ գոյակցութիւնը Լիբանանի առաքելութիւնն է եւ ամբողջ աշխարհին ուղղած պատգամը:

Նախորդ վեհաժողովի նախագահ Քանաթաքի վարչապետ Ժան Քրէթիէնի եւ նախկին ընդհանուր քարտուղար Պուլթրոս Լալիի ճիգերը դրուակելով, նախագահ Լահուտ ընդհանուր քարտուղար Պուլթրոս Գրիսի օրերուն եւ մասնաւորապէս Վատիկանի ջարդի ժամանակ Լիբանանի կողմէ կանգնած Լալիի կեցած քննարկումները համար: Սենեկալի նախկին նախագահ Ապտո Տիուֆրին ընդհանուր քարտուղար ընտրութիւնը շնորհաւորելով, նախագահ Լահուտ հաստատեց, որ Շար.՝ էջ 10

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ...

Շարունակում Ա. Էջէն

ընտրելու համար 654 համայնքի ղեկավարներ եւ համայնքի աւագանիի անդամներ: Համայնքի ղեկավարի համար ներկայացած էին 1318, իսկ աւագանիի անդամի համար՝ շուրջ 4000 թեկնածուներ: Ընտրութիւններուն հետեւելու համար Հայաստանի մեկնած էին 67 դիտորդներ. ընտրութիւններուն հետեւեցան նաեւ Հայաստանէն շուրջ 1000 դիտորդներ:

Կեդրոնական Ընտրական Յանձնախումբի հաղորդման համաձայն, արձանագրուած է քուէարկողներու աշխուժ մասնակցութիւն: Յետմիջօրէի ժամը 3:00ին (<Հայաստանի ժամանակացոյցով>) տուեալներով. Վանաձորի բոլոր ընտրաշրջաններուն մէջ քուէարկած են շուրջ 8,400 քաղաքացի. Գիւմրիի մէջ՝ 22,700, Արթիւ մէջ՝ 13,000, Արմավիրի մէջ՝ 8,000, Սիսիանի մէջ՝ 10,000: Կէսօրուան ժամը 1:00ին Երեւանի Կենտրոն համայնքին մէջ քուէարկեց Հայաստանի նախագահ Ռոպիթ Քոչարեան: Քոչարեան նշեց, որ նախօրոք կողմնացուցած է իրաւապահ մարմինները՝ չմիջամտելու ընտրութիւններու ընթացքին: Նախագահը նաեւ նշեց, որ ընտրութիւններուն յաղթանակը պէտք է վուսայ ըլլայ, իսկ պարտուողը պէտք է ընդունի պարտութիւնը եւ շնորհակալութիւն յայտնուի:

**Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**  
**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**  
Կիրակի, 27 Հոկտեմբեր 2002ին Գիտ Խաչի Կիրակին, պիտի տօնախմբուի Ս. Նշան Մայր Եկեղեցոյ ամուսնակոչութիւնը:  
Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել, եւ կամ մասնակցի միջակամ նուիրում, թող բարի ըլլաւ կապ պահել քաղաքացիութեան քարտուղարութեան, հեռաձայնով 01-981102/3 եւ կամ տեղի հոգ 03-885941:  
**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**ՀԱՅ ՄԻՏԵՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՈՒԷՃ 80ԱՄԵԱԿ**  
**ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ**  
Շաբաթ, 7 Ղեկտեմբեր 2002ին  
Հովանաւորութեամբ՝ Լիբանանի Առաջին տիկին ԱՆՏՐԵ ԱՆՇՈՒՏԻ  
ԵՐԳԱՎՆՆԵՐ  
ԼԵՆԱ ՔԻՒՐՔՃԵԱՆԻ  
AUB Էսեմպլի հոլ  
**ԳՐԱԴՈՒԱԾ Բ. ՕՐ**  
ՋՈՒԹԱԿԻ ՆՈՒՎԳԱՎՆՆԵՐ  
7 ՓԵՏՐՈՒՄ 2003

**ՄԱՀԱԶԴ**  
Տէր եւ տիկին Յարութիւն եւ Արաքսի Տիրացուեան եւ զաւակուներ  
Տէր եւ տիկին Շահէ եւ Վերա Մանայեան եւ զաւակուներ  
Տէր եւ տիկին Ժիրայր եւ Զարմինէ Երէցեան եւ զաւակուներ  
Տէր եւ տիկին Սարգիս եւ Մարալ Զեպեճեան  
Տէր եւ տիկին Սթիվ եւ Նորա Զալիս  
Տիկին Նոյեմի եւ պրն. Կարապետ Շաքեան  
Տէր եւ տիկին Գէորգ եւ Լուսին Շաքեան եւ զաւակուներ  
Տէր եւ տիկին Նուպար Տիրացուեան եւ զաւակուներ  
Տիկին Զարուհի Վարդանեան  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝  
**ՎԵՐԳԻՆ ՏԻՐԱՅՈՒԹԵԱՆԻ**  
(Ծնեալ ՄԱՐԱԹՃԱԼԵԱՆ, Չորք Մարգարան)  
մահը, որ պատահեցաւ յետ երկարատեւ հիւանդութեան, կիրակի 20 Հոկտեմբեր 2002ին:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 21 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուլթրոս Համալսարանի Ազգային գերեզմանատուն:  
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Հանքաշ փողոց, Երկուշաբթի 21, Երեքշաբթի 22, Չորեքշաբթի 23 Հոկտեմբերին:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**  
Հովանաւորութեամբ՝ Մշակոյթի նախարար  
**ՂԱՍՍԱՆ ՍԱԼԱՄԻ**  
Կը ներկայացնէ՝  
Հայրենի տաղանդաւոր եւ միջազգային դաշնակահար  
**ԱՐՄԷՆ ՊԱՊԱՆԱՆԵԱՆ**  
Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին,  
A. U. B.ի ASSEMBLY HALLին մէջ:  
● Տոմսերը ստանալ՝ Sodeco Square, Համազգայինի գրախանութ («Ճաղգոյեան» կեդրոն), «Լեւոն Շանթ» կեդրոն եւ Ելոյթի օրը կիշէն:

**ԼԱԻԱԳՈՅՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԸ ՀԱՄԱՐ... ԼԱԻԱԳՈՅՆ ԾԱՄԲԱՆ**  
**POLYGLOT TECHNICAL COLLEGE**  
ՄԱՍՆԱԳԻՏԱՅԱՑ ԱԵՒԱՐԿԻՆ ՄԵՋ, ԸՆՏՐԵ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԸ  
B. T. T. S. (B. A.)  
● BUSINESS STUDIES ● COMPUTER ● EXECUTIVE SECRETARY ● TEACHING DIPLOMA  
● INTERIOR DESIGN ● GENERAL DECOR ● CHIEF ACCOUNTANT ● JEWELLERY MOLDING  
● COMPUTER TECHNICIAN ● TICKETING & TOURISM ● COMPUTER LANGUAGES ● ENGLISH  
& OTHER LANGUAGES ● MARKETING ● MANAGEMENT ● BANKING  
**LEARN ENGLISH**  
♦ Small classes  
♦ Morning and evening  
♦ Beginners to university level  
♦ Toefl extra  
♦ Direct audio visual method  
**EXECUTIVE SECRETARY**  
Ոչ մէկ ընկերութիւն կրնայ գործել առանց քեպի:  
Եղիր 21րդ դարու քարտուղարուի  
**BUSINESS STUDIES**  
The world's present & future is based on business studies.  
Be a leader in marketing, or banking.  
**«ՄՈՍԻ ՇՈՒԹ»Ի ԵՒ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԱՇՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՆԹԱՅԸ**  
Կաղապարաշինութեան գծաբանութիւն համակարգիչի վրայ: Ուսանողներու յաջողակ կաղապարի վաճառում:  
Յաջողակ աշակերտներու գործի ապահովում:  
Պետական վաւերացումով վկայական:  
**ԵՂԻՐ ԶՈՐԴ ԴԱՐՈՒ ՄԱՍՆԱԳԵ ՀԱՍԱԿԱՐԳՉԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՎԱՐՊԵՏ**  
Միանալ գործնական դասընթաց:  
Պետական վկայական:  
Գործի ապահովում:  
**ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՐԻՔ**  
Կը խնդրուի դիմել միայն անոնք, որոնք նուազագոյնը ունին համալսարանական վկայական կամ մասնագիտութիւն:  
**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՐ ԳՈՐԾԱՏԵՐԵՐՈՒՆ**  
Չէր գործերը վստահեցէք POLYGLOT բարձրագոյն վարժարանի մէջ մասնագիտացած մեր շրջանաւարտներուն:  
**POLYGLOT SCHOOL EMPLOYMENT OFFICE**  
Բոլոր այն շրջանաւարտները, որոնք ցարկ անգործ են թող դիմեն  
**POLYGLOT EMPLOYMENT OFFICE:**  
Արձանագրութիւն՝ ամէն օր, առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00:  
Տորա, հեռ. 01 - 251320, 03 - 299484: Տեղի տնօրէն ՊԵՏՐՈՍ ԶԵՍՏԵՍԵԱՆ

**ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ**  
● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նասրալլա Պուլթրոս Սֆէյր պատրիարքը շարաթափելուն Պեքեքէի մէջ ընդունեց Ֆրանսական պատուիրակութիւն մը, որուն մաս կազմեցին Ֆրանսախօս երկիրներու Վեհաժողովի կազմակերպական աշխատանքներու մասնակից նախարար Փիեռ Անտրէ Ուիլյէք, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարուհեան Սիլվի Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի Հարցերու նախագահ Պեռնար Էմիլի եւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆրիլիք Լը Բուրթիէ:  
Շուրջ 40 վայրկեան տեւած հանդիպումէն ետք Ֆրանսայի նախարար յայտնեց, թէ նախագահ Ժաֆ Ծիրաքի կողմէ ուղարկուած են՝ Սֆէյր պատրիարքը պաշտօնապէս հրաւիրելու Ֆրանսա:  
Հանդիպումէն ետք Ուիլյէք շեշտեց, որ Սֆէյր պատրիարք արդէն իսկ «Պիէրի» մէջ անձամբ հանդիպած է նախագահ Ծիրաքի հետ եւ առաջին անգամ ըլլալով չէ, որ պիտի այցելէ Փարիզ: «Սֆէյր պատրիարքի Ֆրանսա այցելութիւնը կ'իյնայ Լիբանան — Ֆրանսա մտերիմ եւ պատմական յարաբերութիւններու ծիրէն ներս, ինչպէս նաեւ անոր հանդէպ նախագահ Ծիրաքի տածած յարգանքին», հաստատեց ան:  
● ՆԱԽԱԳԱԿ Վոր. Էմիլ Լահուտ շարաթափելուն ընդունեց Մալիի նախագահ Ամատու մանին, որուն հետ քննարկեց իրանական-մալիական երկկողմանի յարաբերութիւնները եւ պանոսք բարելաւելու հեռանկարները:  
Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ Սլովաքիոյ նախագահ Ռուսոլֆ Շուսթըրը, որուն հետ քննարկեց միջազգային եւ շրջանային հարցեր, ինչպէս նաեւ Լիբանան — Սլովաքիա երկկողմանի յարաբերութիւնները:  
Շուսթըր շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լահուտի՝ Սլովաքիան Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան անդամ դարձնելու Լիբանանի ջանքերուն համար:  
● ՇԻՒՆԵՐՈՒ Գերագոյն Խորհուրդի փոխ նախագահ Ապտէ Էմիլ Բապայան երէկ ուղղուեցաւ Դամասկոս, ուր իրանեան դեսպանատան մէջ հանդիպում մը ունեցաւ Իրանի զաղտնի սպասարկութեան նախարար շէյխ Ալի Եուսէփի հետ:  
Հանդիպումին քննարկուեցան շրջանային հարցեր, յատկապէս պաղեստինցի ժողովուրդին դէմ ի գործ դրուած իսրայէլեան բռնարարները: Ներկաները զատապարտեցին Սուրիան հաշտութեան կանչելու ամբողջական Բոնկիզսի ծրագիրը եւ շեշտեցին արաբական միասնականութեան անհրաժեշտութիւնը՝ դիմադրելու համար արաբ ազգին սպառնացող մարտահրաշէրներուն եւ վտանգներուն: Քննարկումի առարկայ դարձան նաեւ Իրաքի ուժերի կոծելու ամբողջական սպառնալիքները:  
● ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ Այն Հելուէ գաղթականային մէջ երէկ առաւօտեան կանուխ ժամերուն տեղի ունեցաւ պայթում մը՝ Ֆաթի շարժումի արտաքին յարաբերութիւններու պատասխանատու Ապու Հիւսէյն Չէյիսի բնակարանին առջեւ:  
Պայթումը պատճառեց նիւթական մեծ վնասներ, ինչպէս նաեւ պատճառ դարձաւ, որ վիսեալներ շրջին գաղթականային փողոցներուն մէջ:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԹՈՐՈՍ ՈՍՍԻՆ» ԿԵՐՊՈՐԱՐԻՏԵՍԻ ԴՊՐՈՅ**  
**ՎԵՐԱՍՈՒՏ**  
2002-2003  
Արձանագրութիւնները կը շարունակուին Նշան Փալանճեան ձեմարան, երեկոյեան ժամը 4:00էն 6:00:  
Դասաւանդութիւնները կը սկսին Ուրբաթ, 25 Հոկտեմբեր (միջնակարգ բաժին) երեկոյեան ժամը 4:00էն 6:00, Նշան Փալանճեան ձեմարան, Չորաք Էլ Պլաթ: Ետ. 01-375411:  
**ԾԱՆՕԹ.** Աշակերտութեան երթողարձը «Լեւոն Շանթ» կեդրոնէն դէպի Նշան Փալանճեան ձեմարան ապահովում է:

**PHOTO NERSES**  
ԱՐԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԱԿԱՐԵՐ  
Չիւ ուրախ առիթներու լուսանկարները տպելու նոր հասած ԱՐԳԻԱԿԱՆ DIGITAL ՕՏԵՂՈՎՈՒՄՈՒՄՈՒՄ յարկաւոր եւ զանազան չափերով Ստանդարտ՝ 20 վայրկեանէն  
Լուսանկարները կ'արձանագրուին CD-ի կամ FLOPPY տիպի վրայ  
Camera-ներու ճոխ իււաքանակ  
պլաններ եւ նկարի շրջանակներու ընտիր տեսակով  
Կը ստանանք ուրախ առիթներու photo նկարահանումը արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գինովով:  
Պուրճ Կանուտ. Զաղաքապետարանի փողոց  
«Սանթրո Արիս» դիմաց. Ետ. 01-261858 եւ 01-255992

Հ.Մ.Լ.Մ. ՊՈՒՐԵ ԶԱՄՈՒՏԻ ՍԿԱՌԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԻՆ ԱՌԻԹՈՎ

# ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՊՈՒՐԵ ԶԱՄՈՒՏԻ ԸՐԱՊԱՐԱԿԻՆ ԿՐԱՅ

Երէկ, Կիրակի 20 Հոկտեմբերին, Պուրե Զամուտի ֆաղաքապետարանի հրապարակին վրայ խանդավառ մթնոլորտ մը կը տիրէր:

Հ.Մ.Լ.Մ. Պուրե Զամուտ մասնաճիւղի սկառուտական աշխատանքներու պաշտօնական վերամուտի հանդիսութեան առիթով հրապարակը զարդարուած էր սկառուտական ձեռագիր իւրայատուկ աշխատանքներով, նկարներով եւ ջանքերով ու խնայողութեամբ:



անկարելի ունէր կը մնայ մասնաճիւղին համար եւ աւելցուց, թէ հաւատքը գլխաւոր խթանն է բոլոր երազներու իրականացման:

ժամը 6:00ին, Հ.Մ.Լ.Մ. շնորհակալութեամբ տեղի ունեցաւ տողանցք, որմէ ետք հնչեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները:

Ապա հայերէնով եւ արաբերէնով բարի գալուստի խօսք արտասանեց մասնաճիւղի խմբագրութեան պատասխանատու Պէթի Պէշլեան, որ ըսաւ, թէ սկառուտական աշխատանքները կը միտին մարդակերտման առաքելութեան իրականացման: Ան նշեց, թէ Հ.Մ.Լ.Մ. կանոնը կը սորովի ըլլալ արի եւ վեհանձն եւ հարգելիքն ու ազգին ծառայող ծայ: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կը կանգնին սկառուտական աշխատանքներու իրականացման:

Ապա խօսք առաւ Հ.Մ.Լ.Մ. Երջանային Սկառուտական խորհուրդի ատենապետ Գէորգ Այանեան, որ ըսաւ, թէ ամիսներ առաջ լեռնեւրուն վրայ միասնաբար «Յոնեսութիւն» երգելէ եւ դարձեալ տեսնուելու խոստում տալէ ետք, կրկին հասած է հանդիպման պահը: Ան ըսաւ, որ եթէ Հ.Մ.Լ.Մ. գոյուլ թիւն չունենար, մանաւանդ համաշխարհային նացիոնալ տիրապետութեան այս ժամանակաշրջանին, շատ մը մանուկներ ու պատանիներ կրնային կորսուիլ: Ան նշեց, թէ այս միութիւնը իր շուրջ կը համախմբէ բոլոր հայորդիները եւ կը ջանայ անոնց տալ առողջ միտք ու առողջ մարմին: Ասկէ մեկնելով ան կ'ընդունէր ծնողներուն իրենց զաւակները միացընել Հ.Մ.Լ.Մ. շարքերուն եւ վստահ ըլլալ, թէ անպայման անոնք կը կազմաւորուին լաւ ձեւով:

Ապա տեղի ունեցաւ խոստման արարողութիւն եւ աստիճանատու չուրիւն, որմէ ետք Հ.Մ.Լ.Մ. Պուրե Զամուտ մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցեց Անթուան Գազգեան, որ ըսաւ, թէ իր հիմնադրութեան առաջին օրէն Պուրե Զամուտը եղած է հայութեան օրհանր: Ան ըսաւ, թէ այս շրջանին մէջ տեղի ունեցած է անպատեհներէ ճողոպարածներու հայրենի կազմաւորման գործընթացը, որուն մէջ իր իւրայատուկ դերը ունեցած է Հ.Մ.Լ.Մ. Պուրե Զամուտ մասնաճիւղը իր բոլոր յանձնարարութեան շնորհիւ կը գործէ ի խնդիր տիպար քաղաքացիի եւ գլխաւոր հայր հոգեւոր, մտաւոր եւ ֆիզիքական դաստիարակութեան եւ աւելցուց, թէ ասոր իրագործումը կ'ենթադրէ գոհողութիւն եւ անձնուրիշութիւն: Անթուան Գազգեան շնորհակալութեամբ անցաւ Լուսաւորութեան անոր շուրջ գետեղած ջահերուն բողոք: Անկէ ետք, սկառուտները ներկայացուցին զեղարձեւատական ճոխ յայտագիր, կրակի հետաքրքրական խաղեր, կենդանի կարճ պատկերներ, երգեր եւ պարեր:

Հանդիսութեան փակման խօսքը արտասանեց Փառէն Վրդ. Վարդանեան, որ ըսաւ, թէ այս հրապարակային ձեռնարկը քայլերի եւ զենահատելի է, որովհետեւ

# السفير

## البيق

### السفير

### السفير

### السفير

### السفير

Տեղական մամուլը իր 19 Հոկտեմբերի թիւով գլխաւորաբար անդրադարձած է Ֆրանսախօս Երկիրներու 9րդ Վեհաժողովին եւ Միացեալ Նահանգներու կողմէ իրաքի դէմ պատրաստուող պիւնտրական յարձակումներուն եւ անոնց առնչուող վերջին իրադարձութիւններուն:

«Նահար» գրած է, թէ Ֆրանսախօս Երկիրներու Վեհաժողովի բացման գլխաւոր հարցերը եղան Միջին Արեւելքը, իրաքը եւ մշակութիւնը միջեւ երկխօսութիւնը: Նահագահ Շիրաք դէմ արտայայտուեցաւ արկածախորհրդական քայլերու, իսկ նախագահ Լահուտ պահանջեց, որ Իսրայէլէն հաշիւ պահանջող օրէնք մը որդեգրուի:

«Մաֆիր»-ի համաձայն, վեհաժողովին իրականացումը ներկայութիւնը յատկանշուեցաւ պատրիարք Սֆէյրի եւ շէյխ Նաւարայի անակնկալ մասնակցութեամբ. արտասանուած խօսքերը կեդրոնացան Իրաքի, Պաղեստինի եւ ահաբեկչութեան վրայ. Լահուտ շեշտեց, որ Իսրայէլ պետական ահաբեկչութիւն կը գործէ, իսկ Շիրաք ըսաւ, որ ահաբեկչութեան դէմ պետք է պայքարիլ ՄԱԿի շրջագիծին մէջ: Շէյխ Նաւարայի խօսքերուն ճարտարութիւնը ուշադրութիւնը գրաւեց, իսկ ժաք Շիրաք եւ Սֆէյր պատրիարք կարճ խօսակցութիւն մը ունեցան, գրած է «Տիար» օրաթերթը:

«Պայրաք»-ի համաձայն, արաբական վեհաժողովի նախագահութիւնը ստանձնելէ ետք, Լիբանան երէկ նաեւ դարձաւ Ֆրանսախօս Երկիրներու Վեհաժողովին նախագահը. երկու կազմակերպութիւնները կ'ընդգրկեն 75 երկիրներ: Նախագահ Լահուտ դէմ արտայայտուեցաւ Իրաքի դէմ հարուածին եւ Սուրիոյ շրջափակումին: Նախագահ Շիրաք Սֆէյր պատրիարքը Փարիզ հրաւիրեց:

«Մուսթաքպալ» նշած է, թէ Պէյրութի վեհաժողովին նախագահութեան նախագահը կը կազմէ երկխօսութեան նախապատուութիւն տալու պահանջը: Պուրուս Ղալի յայտարարեց, որ Լիբանան երկիր մը ըլլալէ աւելի խորհրդանիշ մըն է:

«Քիֆահ Արապի» օրաթերթը գրած է, թէ վեհաժողովը բացուեցաւ քաղաքական բնույթի կեցումներով. Իրաքի դէմ հարուածը միաձայնութեամբ կը մերժուի:

Ըստ «L'Ophran Lp ժուր»-ի, վեհաժողովին արտասանուած խօսքերուն ճարտարութիւնը կարճ խօսակցութեամբ կազմակերպուեցաւ Իրաքի դէմ ահաբեկչութեան կեանքի մէջ ինքզինք հաստատեց: Արժարժուած հիմնական նիւթերն էին՝ Իրաքը, Պաղեստինը, ժողովրդավարութիւնը, ահաբեկչութիւնը, մշակութային արտադրութիւնը եւ Եւրոպական Միութիւնը կ'ընդգեցին

տնտեսական յարաձուռն վարգացումը: Այս ծիրին մէջ թերթերը նաեւ անդրադարձան են այն «միջադէպին», թէ ֆրանսացի - իսրայէլացի թղթակիցի արգիլուեցաւ ֆրանսախօսներու վեհաժողովին լրատուութիւնը կատարել:

Իրաքի հարցին մասին թերթերը գրած են, իսրայէլեան բռնարարները կասեցնելու եւ քաղաքայիններուն ապահովութիւն տալու:

Լիբանանեան օրաթերթերը նաեւ անդրադարձան են այն իրողութեան, թէ ելեկտրականութեան ընկերութիւնը յայտարարած է, որ հասարակութիւնը պիտի տրամադրուի 24 ժամուան վրայ 24 ժամ:

ԱԼԵԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ  
Հ.Բ.Ե.Մ. - Հ.Ե.Ը. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՅԱՆՁՆԱՆՈՒԹԱՅ

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ

Ա. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԵԻ  
ԾՈՎԱՆԿԱՐԻՉԸ  
Կը ներկայացնէ՝ ՎԱԶԳԵՆ ՄՈՒՐԱԼԵԱՆ

Բ. ՄՐՅԱՆԱԿԱՐԱԶԵՆՈՒԹԻՒՆ՝  
«ԲԱՆԱՍԵՂՅԱԿԱՆ ՅՈՐԻՆՈՒՄԻ ՄՐՅԱՆԵ»-ԻՆ

Տեղի կ'ունենայ Գործընթացի, 23 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:30ին, Ալեք Մանուկեան կեդրոնի մէջ, Ութուրա:

LEBANESE ARMENIAN TECHNICAL COLLEGE  
L.A.T.C.  
ԱԶԳԱՅԻՆ ԳՈՒԼԵԾ

### Technical Baccalaureate BT

Commercial Sciences  
Accounting and Computer Services  
Sales and Commercial Relationships  
Administrative and Office Services

### Professional & Technological Studies PTS

COMPUTER

|  |   |   |
|--|---|---|
| <b>Literacy</b><br>Windows, Internet, Utilities<br>Microsoft Office:<br>(Word, Excel, Access, PowerPoint, Outlook) | <b>Graphics</b><br>Adobe Photoshop<br>Quark Express<br>Corel Draw | <b>Web Design</b><br>HTML (Frontpage, Programming)<br>Macromedia Flash<br>JAVA script |
|--|---|---|

**Business & Accounting**

|  |
|--|
| Salesmanship<br>Management<br>Accounting<br>Finance<br>Economy |
|--|

**LANGUAGES**

|   |
|---|
| English (level I, II, III)<br>Spoken French<br>Spoken Arabic<br>Spoken Armenian |
|---|

**FASHION-DRESS DESIGN**

**INSURANCE**

Office hours: Monday - Friday 3:00 P.M. to 9:00 P. M.

Levon & Sophia Hagopian College,  
Bourj Hammoud, Arax Street  
Tel: 01 / 262618

[www.LATC-edu.com](http://www.LATC-edu.com)  
Email: info@LATC-edu.com

ԳՐԱԴՆԱԿԱՆ ՕՐ

LOsh  
«ԱՐՅԱՆ»  
ՄԱՍՆԱՃԻԻՂ

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 11  
ԴԵԿՏԵՄԲԵՐ  
2002

ՄԱՐԻԱ  
ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ  
ԸՆԴ  
ԱՐԾԻԻ  
ՏԵՐ ԽԱԶՏԱՌԻԵԱՆ  
ՆՇԱՆՈՒԱԾ

19 Հոկտեմբեր 2002  
Պէյրութ

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐԳԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ»

Ազգային բարերար Աքսոր Գասարգեան ուրախ է յայտարարելու, որ 2002-2003 տարեշրջանին, Ազգային վարժարաններու մանկապարտեզի եւ նախկին քաղաքացի աշակերտութեան համար հաստատած է կրթական ֆոնտ մը:

Գիտումնագիրները պիտի տրամադրուին Հոկտեմբեր 24էն սկսեալ, Ազգային առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի գրասենյակէն, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն կէսը ետք ժամը 2:00:

«ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐԳԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ»

# ՄՕՏ ՕՐԵՆ

## FUEL CARD

### ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՈՆՏ

www.mesrobian.com

1600ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՈԱԶ

ՊԱՏԱՆԻ ԱՍՄՈՒՆՔՈՂՆԵՐՈՒ ՆԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՌԱՏՕՆ

Շուտով կը լրանայ հայոց գիրերու գիւտին 1600ամեակը: Գարադարձը այն մեծ թուականին, երբ հայ ժողովուրդը, որ գտեր էր իր հաւատքի ճամբան քրիստոնէութեան ընդունումովը իրրեւ պետական կրօն, ահա ամուր կերպով հիմքերը կը դնէր իր մշակութային անկախութեան: Հայր կ'ունենար իր գիրքը, իր մշակութիւնը եւ այլեւս ուրիշ ազգերէ փոխ չէր առնէր գիր եւ գրականութիւն:

1903ին աշխարհով մէկ հռչակուեցաւ հայոց գիրերու գիւտին 1500ամեակը եւ հայ տպագրութեան 400ամեակը, աննախընթաց շուրջով եւ տարողութեամբ: Վստահ ենք, որ հիմա, երբ կը մօտենանք 2005ին, մեր պետութիւնն ու եկեղեցին պատշաճ շուրջով պիտի նշեն այս մեծ դարադարձը:

Եւ ահա, այդ դարադարձին իբրեւ անդրանիկ պատրաստութիւն, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը նախաձեռնեց պատանի ասմունքողներու հանրապետական փառատօն մը, որուն նպատակն է մեր նոր սերունդին մէջ անցնել հայոց լեզուն հանգիստ սէրն ու պաշտամունքը, եւ հրաւիրել, որ մեր պատանիները սորվին, երգեն, արտասանեն, տարածեն եւ համբաւեն հայոց լեզուի գանձերը, մեր գրողներուն եւ բանաստեղծներուն գեղեցկագոյն էջերը: Այս մտածումով, եւ Հայաստանի Գրողներու Միութեան հետ միասին, ծրագիր մը ներկայացուցաւ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեանին, եւ յետ խորհրդակցութեան հաստատուեցաւ այս փառատօնին կարգը եւ փառատօնին մասնակցեցան 8 - 10րդ դասարաններու աշակերտներ: Փառատօնը տեղի ունեցաւ 25 Սեպտեմբերին 12 Հոկտեմբեր, երեք փուլով՝ դպրոցական, մարզային - քաղաքային եւ հանրապետական:

Մասնակցողները պէտք է ընտրէին եւ արտասանէին Մեսրոպ արք. Աշտնիկի կողմէ կազմուած «111 հատընտիր հայ բանաստեղծութեան» ժողովածուէն բանաստեղծութիւններ:



Ասմունքին մրցումին մասնակցները (Ճաղկաձոր, Եղիշէ Գարենցի արձանին առջեւ)

25ին 30 Սեպտեմբեր գպրոցներուն մէջ տեղի ունեցան գտումի մրցումները: 15ն 5 Հոկտեմբեր մարզերուն մէջ կազմակերպուեցան մարզային մրցումները, որուն մասնակցեցան շուրջ 2600 աշակերտներ եւ 105ն 11 Հոկտեմբեր յաղթողները հաւաքուեցան Գրողներու Միութեան Մաղկաձորի ստեղծագործական տունը, ուր տեղի ունեցան վերջին մրցումները, որոնց համար ստեղծուեց էր յատուկ դատական կազմ մը:

- 1.- Սօս Սարգսեան
  - 2.- Յովիկ Հովհեան
  - 3.- Սիլվա Եւզրաշեան
  - 4.- Վերա Աւագեան
  - 5.- Աննա Հեքեքեան
  - 6.- Մեսրոպ արք. Աշտնիկ
  - 7.- Լեւոն Անանեան
  - 8.- Արմէն Ամիրեան
  - 9.- Ազատ Գասպարեան
  - 10.- Պէտրոս Ստեփանեան
  - 11.- Նարինէ Մնացականեան
- Վերջին հանգրուանին աշակերտները պէտք է արտասանէին երկու բանաստեղծութիւն: Մէկը՝ «111 հատընտիր հայ բանաստեղծութեան»էն, միւսը՝ ընտրովի: Կային նաեւ հինգ պարտադիր բանաստեղծութիւններ:

«Կարօտի նամակ» (Գանիէլ Վարուժան), «Հին օրինակներ» (Յովհաննէս Թումանեան), «Խօսք իմ որդուն» (Սիլվա Կապուտիկեան), «Եկեղեցին Հայկական» (Վահան Թէքէեան), «Մեր լեզուն» (Եղիշէ Գարենց):

Մրցումին մասնակցողները Մաղկաձորի գրողներու ստեղծագործական տուն հասան Հինգշաբթի, 10 Հոկտեմբերին, եւ հիւրը եղան Գրողներու Միութեան եւ տնօրէն Մովսէս Մանուկեանին: Ամբողջ օրը անց բարեկամական հանդիպումներով եւ գրողներով: Երեկոյեան մասնակցիցներ եւ գատական կազմի անդամներ առիթը ունեցան գրուեցաւ եւ քննելու մրցման պայմանները: Ուրբաթ, 11 Հոկտեմբեր, առաւօտեան ժամը 11:00ին սկսան մրցումները: Հանդիսութեան ընթացքին խօսք առին Մեսրոպ արք. Աշտնիկ եւ կոտայրի թեմի առաջնորդ Առաքել եպս. Գարամբան: Ապա կարգով ըմբ բարձրացան 18 մասնակցիցներ՝ Երեւանէն վեց, մարզերէն տասը եւ Ջաւախքէն երկու հոգի: Արտամրցանքային կարգով մասնակցեցաւ նաեւ Մաղկաձորէն Յասմիկ Մարտիրոսեանը: Պատանի շրթներէն եւ հոգիներէ խօսեցան Թէքէեան, Իսահակեան, Չարենց, Կապուտիկեան, Վարադը, Թումանեան եւ ուրիշ բանաստեղծներ: Հրաշալի եւ յուզիչ երեւոյթ էր: Ետեւ յաջողութեամբ, ոմանք շփոթմունքով, բայց բոլորն ալ հայ լեզուի եւ գրականութեան պաշտամունք ունեցող հոգիներ էին, որոնք ահա կը հաստատէին զեկեղեցիկ աւանդոյթ մը:

Ասմունքներու աւարտին շնորհակալական եւ գնահատական խօսքով հանդէս եկան կրթութեան եւ գիտութեան փոխ նախարար Այտա Թօփուզեան, Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան: Շարքով, 12 Հոկտեմբեր. Սրբոց թորգմանչաց տունը Օշականի մէջ անմոռանալի օր մը եղաւ... Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան մէջ տեղի ունեցաւ «Մաշտոցեան ընթերցումներ» շրջանակի գիտատեղի մասնակցութեամբ 40է աւելի պատմաբաններու, գիտնականներու, արուեստաբաններու եւ լեզուաբաններու: Գիտատեղիով ներկրուած էր դպրատան հնգամեակին եւ հոգեւոր Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի ծննդեան 70ամեակին: Ժամը 11:00ին Ս.



Սեպուհ Արզարեան եւ իր «Պոհար» երգչախումբը ու պարախումբը

պատարագ մատուցեց Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Վազգէն վրդ. Միզրախանեան՝ ի ներկայութեան ըզգմահարիւր աշակերտներու, որոնք կարգով կը խոնարհէին սուրբի շիրիմին եւ այնտեղ կը զետեղէին վարդեր ու մեխակներ: Ժամը 12:00ին ժամանեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը, որ նաեւ տուաւ իր պատգամը եկեղեցու մէջ հաւաքուած բազմութեան: Ժամը 1:00ին եկեղեցու յովիթ ունեցաւ Հայոցեայ Տուներու ազգագրական խումբը: Խօսք առին Վազգէն վրդ. Միզրախանեան եւ Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետեան: Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կողմէ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Մեսրոպ արք. Աշտնիկ, ներկայացուց պատանի ասմունքողներու հանրապետական անդրանիկ փառատօնին մասին իր գեկոյցը եւ ներկայացուց 7 մրցանակակիրները, որոնք արժանացան Դրօ Փիլիկեանի, Վարդգէս եւ Շուշան Մարգարեաններու, Մելքոն Յակոբեանի եւ Արմէն Ամիրեանի հաստատած մրցանակներուն եւ գրամական պարգեւներուն: Վեհափառը մրցանակները ըստնեց հետեւեալներուն:

Նարեկ Խաչատրեան, Երեւան, առաջին Աճա Մանուչարեան, Երեւան, երկրորդ Սեւակ Խուզվերդեան, Կարբ գիւղ, երրորդ Մերի Սարգսեան, Երեւան, խրախուսական Նարեկ Մարգարեան, Երեւան, խրախուսական Արարիկ Սըրճեան, Ջաւախք, խրախուսական Գոհար Պօղոսեան, Վանաձոր, խրախուսական: Գահինկիրները ստացան վկայական, յուշատետրակ եւ զրամական նուէրներ՝ 500, 300, 200 տոլար առաջին երեք տեղերու համար, եւ չորս հատ ալ 100 տոլար խրախուսական նուէրներ:

Ներկայ 2000է աւելի աշակերտներ ստացան Փրօփիտրոսէն Վարդգէս Մարգարեանին ուղարկած յիշատակի խաչիկները:

Մեսրոպ սրբազանին հրաւերով խօսք առին Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան եւ ռուս գրողներու պատուիրակութեան կողմէ գրող Անտրէյ Նիկիին: Ռուս պատուիրակութեան Հայաստան կը գտնուէր Թարգմանչաց տունին առիթով, եւ հայ-ռուսական օրերու կապակցութեամբ: Հուսկ, ներկայ ժողովուրդին իր օրհնութեան, շնորհաւորանքի եւ գնահատանքի խօսքը ուղղեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս, որ անգամ մը եւս վեր առաւ Թարգմանչաց տունի ողին եւ կոչ ուղղեց ներկայ ժողովուրդին՝ հաւատարիմ մնալու անոնց բացած ուղիին, որ մեզ կը տանէր դէպի Աստուած եւ դէպի հայրենիք:

Յաւարտ հանդիսութեանց, տեղի ունեցաւ հոգեճաշ՝ երկու վաղեմի ուսուցիչներու Արամ եւ տիրամար Սիրվարդ Սարգիսեաններու յիշատակին: Մուշկի մէջ Մեսրոպ սրբազան ընդունեց եւ հիւրասիրեց ռուս գրողներու պատուիրակութիւնը, որուն կ'ընկերանար Հայաստանի Գրողներու Միութեան ղեկավարութիւնը: Օրուան վերջին Մաշտոցեան ընթերցումներու մասնակցները ունեցան լիազուտար նիստ եւ ամփոփեցին օրուան արդիւնքները, ապա հիւրասիրուեցան Մոնրէշալէն Տիգրան եւ Տիանա Հաճէթեան ամուլին կողմէ:

Օրը փակուեցաւ շքեղ համերգով մը: Գիւմրիէն Օշական եկած էր «Գոհար» երգչախումբը - պարախումբը, աւելի քան հարիւր հոգի, որոնք իրենց ղեկավարին՝ Սեպուհ Արզարեանի վարժ եւ խանդավառ ցարկին ներքեւ ներկաներուն հրամցուցին սիրուած եւ ժողովրդական երգեր, մէկը միւսէն գեղեցիկ, անուշ եւ համով:

Թարգմանչաց օրուան համար այնքան պատշաճ փակում էր համերգը: Եւ բարի ցանկութիւն էր յառաջիկայ տարի Թարգմանչաց տունը տեսնել պետական եւ համահայկական տարողութեամբ: Այնպէս՝ ինչպէս վայել պէտք է ըլլայ գիրերու գիւտին 1600ամեակին պատրաստուող հայ ժողովուրդին համար:

Փառատօնին ի պատրաստութիւն տպուած յատուկ «111 հատընտիր հայ բանաստեղծութեան» հատորը կը պարունակէր հայ գրականութեան գոհարներու փունջ մը, որ աւելի քան վաթսուներեւ մեծապատեղծներու գեղեցկագոյն էջերէն ընտրուած են: Արեւելահայ եւ արեւմտահայ երբեք չհաւատարման հաւատարմապէս ներկայացուած են:

Գիրքը տպուած էր 5000 օրինակով, մէկ մասը՝ Հայաստանի գործածութեան համար՝ արեւելահայկական ուղղագրութեամբ, մէկ մասն ալ՝ դասական ուղղագրութեամբ: Նպատակը եղած էր այնպէս ընել, որ ուղղագրութեան պատճառով ոեւէ աշակերտ չզրկուի լիբրու կերպով մասնակցելէ այս փառատօնին:

Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը շնորհակալ է Դրօ Փիլիկեանին, Մոնրէշալ - Նիւ Երզնէ, որ սիրալոյսով կերպով օժանդակեց այս փառատօնին յաջողութեան, ի յարգանս իր մօր՝ Արմենուհի Փիլիկեանին, որ այսօր ալ, հակառակ իր տարիքին, աշխուժ կերպով կ'արտասանէ եւ հայ լեզուն կը պանծացնէ ամէնուր: Նոյնպէս շնորհակալութիւն Փրօփիտրոսէն Վարդգէս եւ Շուշան Մարգարեան ամուլին, որոնք հակառակ անոր Ամերիկա ծնած են եւ մեծցած, միշտ կը սիրեն հայ լեզուն, հայ հոգին, անոնցով կ'ապրին եւ կ'ապրեցնեն մեզ:

ԼՈՒՐԵՐ ՉԱԻԱԽՔԵՆ

ՀՕՄԿԸ ՍՏԱՆՉՆԵ ՆԱԽԿԻՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ՄԸ ՀՈՎԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Ախալքալաքի մէջ Հայ Օղնութեան Միութեան եւ քաղաքի շրջանային վարչութեան միջեւ վերջերս համաձայնագիր մը կնքուած է, որուն համաձայն, Ախալքալաքի նախկին գիշերօթիկ դպրոցը իր ամբողջ գոյքով, տարածքով եւ շինութիւններով առանց ժամկէտի կը յանձնուի ՀՕՄին:

«Ա. - ԻնՖՕ» լրատու գործակալութեան համաձայն, ՀՕՄ նպատակ ունի վերանորոգման աշխատանքներ կատարելէ ետք վերաբանալ գիշերօթիկ դպրոցը, ուր պիտի յաճախեն 300 որբեր: ՀՕՄ կը ստանձնէ նաեւ դպրոցի աշակերտներու կեցութեան, հանգիստին եւ միւս բոլոր ծախսերը:

ՉԻՆՈՒՐԱԿԱՆ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ախալքալաքի թիւ 62 ուսուսական գիւղերուական խարխուխի մէջ յայտարարուած է ստիպողական վիճակ:

Ըստ հաւաստի աղբիւրներու, այդ դրութիւնը յայտարարուած է Սամցխէ - Ջաւախքի մէջ տեղաբաշխուած չեզն ըմբոստներու հաւանական յարձակումներէն պաշտպանուելու համար:

ԱՎՄԵՏ ՉԱՔԱԵԻ ԻՐԱԿԱՆ ԿԸ ՆԿԱՏԵ ԿԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՐԳՅՈՒՄԸ

Իչքերիայի Չեչեկեանի հանրապետութեան փոխ վարչապետ Ահմէտ Ջաբաեւ յայտարարած է, որ վրաստանի Սամցխէ - Ջաւախքի շրջանի կացութեան բարդացումը դրական է: «Փրայմ Նիլուզ» լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը մէջ Ջաբաեւ այդ մէկը կը բացատրէ անով, որ «Ռուսիա չի հրաժարար վրձնակներ կը ստեղծէ այդ երկրի տարբեր մասերուն մէջ, մասնաւորապէս, արդէն տագնապներ հրահրուած են Աբխազիոյ եւ Հարաւային Օսեթիոյ մէջ»:

Ըստ Ջաբաեւի, Մոսկուայի հետ Երեւանի աշխուժ համագործակցութիւնը ներկայ հանգրուանին չի համապատասխաներ կովկասեան շահերուն: Ահմէտ Ջաբաեւի կարծիքով, Սամցխէ - Ջաւախքի մէջ կրնայ խաղցուել Ղարաբաղի սեցարիոն:

ՆԱԽԱՐԱՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԿԸ ՀԵՐՔԸ

«ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ԼՈՒՐԸ

Հինգշաբթի, 10 Հոկտեմբերին, կառավարութեան հետ կարճատեւ գրոյցներու ընթացքին լեւեմուտքի եւ տնտեսութեան նախարարին արտասանած ելոյթը որբան-անպասքի, ինչպէս արտաւայտ էր բոժաճողակային առումով: Նախարար Վարդան Խաչատրեան հանդիպման ներկայացած էր՝ հերքելու համար «Ազատութիւն» ձայնասփիւռի համացանցային էջով տարածուած այն հաղորդագրութիւնը, ուր իբրեւ թէ յայտարարած է, թէ 26-27 Սեպտեմբերին Ուաշինկթոնի մէջ կայացած հայ-ամերիկեան տնտեսական համաժողովին ընթացքին ամերիկեան կողմը խոչընդոտած է Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան Հայաստանի անդամակցութիւնը:

«Ես երբեք նման բան չեմ յայտարարած, որ իբրեւ թէ ամերիկեան կողմը կը խոչընդոտէ: Ընդհակառակը, ըսած եմ, որ պատրաստ է մեզի աջակցելու այդ խնդիրին մէջ», հաւաստիացուց նախարարը: Ան նաեւ նկատեց, որ եթէ նոյնիսկ ամերիկեան կողմին եղած է որեւէ վերապահում, ապա այդ մէկը միայն արհեստագիտութեան ըստինքն վերաբերած է: «Մտահոգութիւն կար, որ հայկական կողմը պիտի չհասնի փոփոխութիւն կատարելու մաքսային օրհնագիրքին մէջ, հետեւաբար ժամկէտը Սեպտեմբերէն տեղափոխուեցաւ Նոյեմբեր»:

Հերքելով արդարացիոր հիմնաւոր ապացոյց իրբե՝ նախարար Վ. Խաչատրեան նշեց, որ պահպանուած է ելոյթին ձայնագրութիւնը:

Աւելի ուշ երէկ կարելի եղաւ պարզել, որ յիշեալ ձայնագրութիւնը պահպանուած է նաեւ «Ազատութիւն» ձայնասփիւռի մօտ, որ իր կարգին մտադիր է վիճալարայի այս հարցին անդրադառնալ յառաջիկայ հաղորդումներով՝ համադրելով նախարարին նախորդ եւ վերջին ելոյթները:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ մինչեւ տարեկան կ'ակնկալուին 130-135 հազար զբօսաշրջիկներ, ըսաւ առեւտուրի եւ տնտեսական զարգացման փոխ նախարար Արա Պետրոսեան, Հայաստանի Ազգային վիճակագրութեան ծառայութեան տուեալներու համաձայն, այս տարուան Յունուարէն Յունիս ամիսներուն Հայաստան այցելած է 57,861 զբօսաշրջիկ, անցնելու տարուան նոյն ամիսներու 46,618 զբօսաշրջիկի փոխարէն: Աճը կազմած է 24,1 առ հարիւր: Փոխ նախարարին խօսքերով, իւրաքանչիւր զբօսաշրջիկ առնուազն 5-7 օր կը մնայ Հայաստան եւ կը ծախսէ 800-1000 տոլար:

● ԻԶԵՒԱՆԻ գինիի գործարարը այս տարեշրջանին մթերեց 320 բոն խալոյ՝ քիլոկրամը 75-120 դրամով: Գործարարի նախագահ Աւետիք Գալստեանի համաձայն, այս օրերուն գործարարին Արտադրութեան 11 հազար 500 շիշ առաքուած է Միացեալ Նահանգներ, իսկ Օգոստոսին Ուրբախի ղրկուած է 15 հազար շիշ գինի: Իջեւանի գինիի կ'արտադրի նաեւ Ռուսիա եւ Ֆրանսա:

● ՄԻԶԱԶԳԱՅԻՆ Դրամական Ֆոնտը հաստատեց Հայաստանի տնտեսական ծրագիրը, որով մօտ օրէն պիտի ստացուի 27 միլիոն տոլարի գումար, ըսաւ լեւեմուտքի նախարար Վարդան Խաչատրեան: Ան նաեւ նշեց, որ այս եռամսեակի վերջաւորութեան Հայաստանի պիտի յատկացուի 10-15 միլիոն տոլարի յաւելեալ գումար:

# Ո՞Վ Է ՔԱՅՔԱՅՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ

Վերջին օրերի ընթացքում Վրաստանի իշխանությունները փորձում են տարբեր արտաքին ու ներքին թիրախների դեմ ուղղուած կանխարգելիչ քայլերի միջոցով ցուցադրել սեփական երկրի վրայ կախուած սպառնալիքները չհզոքացնելու իրենց վճռականությունը:

Դրանց շարքին կարելի է դասել Հոկտեմբերի 2ին Պրիւքսիլում Վրաստանի արտաքին գործոց նախարար Իրաքլի Մենաղարիշվիլու յայտարարութիւնն այն մասին, որ իրենք պատրաստուած են հակաօդային պաշտպանութեան հրթիռներ գնել Ուկրաինայից, որպէսզի խփեն Վրաստանի օդային տարածք ներխուժած բոլոր ինքնաթիռները՝ «որտեղից էլ դրանք գան՝ Ռուսաստանից, թէ՛ այլ մտորակներից»:

Դրան գուճահեռ սկսում են սպառնալիքներ հնչել նաեւ Վրաստանի ղեկավարութեանը գնել Ռաբիտալուոյ նախկին ինքնավարութիւնների հասցէին:

